

ՄԵՐ ԽՍՍՔԸ

Ք Ա Ի Լ Ի Ց Ի...

Դամասկոսի «Էլիֆ Պա» թերթը իր Մարտ 8-ի թիւին մէջ կը գրէ.

— «Պէյրուսի մէջ Հայերը երկու թերթ ունին. մէկը «Ազգակ» մեծ և պատկառելի, որ կը ներկայացնէ հայ հասարակաց և մտաւորականութեան կարծիքը, միւսը անկանոն հրատարակուող «Լիբանան»:

«Երկրորդ թերթին խմբագիրը ծանօթ դարձեր է հայ երեսներէն որոնք վրայ յարձակելով դրամ չահելու եղանակով»:

Դաշնակցութեան Պէյրուսի թերթը կրնայ իր խոշոր արտադրողը «մեծ» և «պատկառելի» երեսցած ըլլալ մեր յարգելի պաշտօնակցի աչքին. այդ ուսանց քով գիտելու ու գտնելու սեփական եղանակ է, որու մասին մեզ խօսք չ'իյնար:

Բայց ըսել թէ ան — Դաշնակ. «Ազգակ»ը — կը ներկայացնէ հայ հասարակաց եւ մտաւորականութեան կարծիքը՝ այդ խոշոր սխալ մըն է, և անհերքելի մեղք:

Սխալ է, որովհետեւ «Ազգակ» ինք կարծիք ըստած բանը չ'ունի, միտք ու հոգի չ'ի կրնար, թուաւոր թմբեցուցիչ մըն է իր ընթերցողներուն, և զաղափարական ման գեղեցկութենէ մերկացած աշխարհիկ մը՝ իր յանաւորներուն:

Մեղք է, որովհետեւ մեր արեւմտ անցնալին տեղեակ, իսկ փոքր-կտ ներկան դրանք ու ներքին գիտող խմբագիրը մը երբեք ներքին պիտի չ'ըլլար վատահամբաւ կուսակցութեան մը թերթին կարծիքները ընդհանրացնել հայ հասարակութեան ու մտաւորականութեան՝ ոճրապարտ կուսակցութեան մը զօրութիւն մեղքերը բերել զնելու համար խեղճ հայու-թեան ծուռ ճանին:

Զարհուրելի ամբաստանութիւն է այդ. վրդովիչ ու ընդվզեցուցիչ մըն է մէկ հայ, ո'չ մէկ մտաւորական պիտի կրնար լուռ մնալ ու չ'ի բողոքել այդպիսի ձրի ամբաստանութեան մը դէմ: Բաւելիք որ «Ազգակներ» ներկայացնեն հայ հասարակաց և մտաւորականութեան կարծիքը. այդ պիտի ըլլար հայութեան մահաճճիքը:

Մենք սակէ առաջ երկար գրեցինք ու խօսեցանք, նոյնիսկ հալածուեցանք ու ջրուեցանք հասկնելու համար մեր բարեկամներուն, թէ Դաշնակցութիւնը հայութիւնն է, թէ ան արհամարելի թիւ մը կը կազմէ մեր մէջ, թէ անոր քանի մը բաղաձայնակի գործիչները «հայ մեծեր» չ'են, թէ անոր թերթերը հայ հասարակաց և մտաւորականութեան կարծիքը չ'են ներկայացնել, թէ անոր արկածախնդրութիւնները հայութեան նոկանքին արժանի են, և թէ վերջապէս, Դաշնակցութիւնը շայուսեան առաջ վարկաբեկուած, լքուած ու արհամարուած դիակ մըն է՝ որ իր հոգեվարքը կ'ապրի:

Անոնք լսեցին այդ բոլորը, բտնել և գործքով տեսան ու հաւատացին այդ ամէնին, և սակայն երբեք ալ չ'ի դարեցան գաշնակ. թերթերու մէջ հայ հասարակաց և մտաւորականութեան կարծիք տեսնելէ՝ որ մը անպայման դաշնակցութեան սեւ մեղքերը սա խեղճ հասարակութեան վրէժ փայթ-թելու կանխադիտումով:

Հո'ս է վտանգը, անաւոր վտանգը, որու առաջ պէտք է սթափի ամէն կայ, և հակէ իր ճակատագրին՝ որ մը կրկին չ'ի ծնծելու համար իր ծուռ-կերը:

Ձի պէտք է մտնալ, որ իթթիհատի «Բիւրօն Լիբանան» երեկէ մահա-ցու մեղքը, մէկ միլիոն անմեղ ու անգիտակ հայեր քաւեցին արաբական անպատեհութեան մէջ, և պատասխանատուները որքան թալիալներու հետ գրկեցանուող Դաշնակ չեֆերն էին, նոյնքան և գէզ ոսկիներու վրայ նստած «Նեմէկէրէք» հայ շոքերն էին, զիրքի և պաշտօնի հետոմուտ վարձկան մտաւորականներն էին: Դաշնակ թմբեցուցիչներէ մտազարած հասարակութիւնն իսկ էր՝ երբ հոս ու հոն կը ծափարարէր դաշնակ գործիչներու պոռոտ պոռոտութիւնները, և հասարակաց կարծիքը կը խառնէր անոնց արկածախնդրութիւններուն:

«Դաշնակցութիւնը հայութեան բիւրեղացած հոգեբանութիւնն է, Դաշնակցութիւնը մեծ կուսակցութիւնը հայութիւնն իսկ է» կը գրէր անցնալ օրերու «ԱԶՍԱՄԱՐՏ»ը, եւ իր գրկից «Բիւրօն Լիբանան»ը, աբանց բառ մը փախցնելու, իրենց սոմարներուն մէջ այդպէս կարճապար-րէին այդ գրաւոր մտերմութիւնը՝ որ մը զանոնք մէկիկ մէկիկ գեղջիլ տա-լու համար համայն թրքահայութեանն: Եւ մենք չէ՞ որ բաղադրեալ տոկոսու-վը հատուցինք այդ բոլոր մտերմութիւնները:

Այսօր նոյնն է պատկերը. Թուրքիա թէ Սուրիա՝ ոչինչ կայ փոխուած: «Էլիֆ Պա» նոյնութեամբ կ'արձանագրէ իր Դաշնակ Լրատուին տեղեկագիրը, հայ մտաւորականն ու հասարակութիւնը իր սովորական լուսնութեամբ կը հաստատէ զան, եւ մենք՝ որ մը մեծով փոքրով կը քաշուինք հաշուի, զեղջիլու համար Դաշնակ խմբագրականներու հազար ու մէկ մտերմութիւնը: Արդէն քիչ չ'են այն մտերմութիւնները՝ որոնց համար ամէն օր կը բռնեն մեր օս-միջին: Բրտական Հայք, Սուրիական Օճախ, Ներքին Մրադիրներ, Դաշնակ փողովներ, Դաշնակցութեան բացը թողած մտերմութիւնն են՝ որոնց համար «Էլիֆ Պա» պատասխանատու մարդիկ կը փնտռեն, և այդ իսկ պատճա-ռով Պէյրուսի Դաշնակ թերթին մէջ հայ հասարակաց և մտաւորականու-թեան կարծիքը կը տեսնեն՝ կամ գոնէ այդպէս արձանագրել կուզեն:

Ուրեմն, եթէ «Էլիֆ Պա» Դաշնակ գործակալը այսօր հասարակ ազգա-փաւ մըն է, հայ մտաւորականն ու հասարակութիւնն ալ անոր վաղուան եղբերի մեղաւորները պիտի նկատուին, եթէ այժմէն չ'ի շարժին, չ'ի քա-ջան, չ'ի քրքին այդ անաւոր ամբաստանութիւնը՝ երբ գեռ միայնը չ'ի

չ'որցած: Եւ ո'չ թէ միայն, հերքել բանիւ՝ այլ և հաստատել գործքով, թէ հայ մտաւորականութիւնն ու հասարակութիւնը ո'չ մէկ կապ ունին այն ամբաստանեալներուն հետ՝ որոնց դէմ իրենք իրենց սեփական դատը ու-նին անմեղ:

Մենք ո'չ իսկ գրիչ մը պիտի թաթխէինք «Էլիֆ Պա»ի գործեան դէմ, որքան ալ ան «մեծ» ու «պատկառելի» տեսնէր Պէյրուսի դաշնակցութեան թերթը, և կամ թէ ուզածին չափ ձրի վերագրուէին ընէր «Լիբանան»ի և անոր տնօրէնին դէմ. որովհետեւ այդ իսկ կը ցուցունէ թէ, «Էլիֆ Պա» երբեք չ'է բացած «Ազգակ»ի ծալքերը, ո'չ իսկ տող մը կարդացած է անկէ, որով-հետեւ չ'ի գիտեր թէ ան մարտական կուսակցութեան մը «մեծ» թերթն է, որ չորս տարուան մէջ հիզ անգամ գոցուած ու բացուած է. և այսօր, իր ապառիկ մամուլը Իճի'Սի միջոցաւ ՄեզԱԹի' է հանուած: Իսկ շանթա՞մը... աւա՛ղ որ «Էլիֆ Պա» չ'ի գիտեր թէ մեր մէջ անոր փաթեթները քառասուն տարիներէ ի վեր «Ազգակներ»ը առած են, և «Լիբանան»էն շատ առաջ, անոնք իրենց օրինաւոր տուրքը վճարած Տօլթ. Մեղք ունենին:

Պէտք էր անել լուսաբանութիւն. փոքր մէջերում մը միայն, երկու տարի առաջ հրապարակ հանուած հասարակական թուցիկէ մը՝ ու կը փա-կնէր մեր նիւթը առժամապէս:

— «Պէյրուսի հրատարակուող «Ազգակ» անուն Դաշնակցական թերթի Տէր և Տնօրէն, Նահլ — Իպրահիմ Ամերիկեան Որբանոցին մէջ հայ որբի մը պատիւը լկող հրէշածին Չօք — Մարդուանցին, որը մտաւորապէս եր-կուցուէն ամիս առաջ թերթի և անձնական գործի պատճառներով Հաւէպ և Դամասկոսի մը գացած, տեղօրիններու ընտրութիւնը տեղում վրայ կատարողն է»:

Կը ցաւինք որ «Ազգակ»ի պատուական Տնօրէնը ցարդ ո'չ հերքած է, և ոչ ալ բողոքած սա սպաննիչ վերագրումին դէմ:

Բաւելիք... մենք չ'ենք ամբաստանողը:

Y.

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԽՆԴԻՐԸ

ԲԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ ՏԻՐԱՆԱԼՈՒ

2,400,000 Ոսկի գին գնահատուած է

Քաղաքապետական շրջանակներէ բխած տեղեկութեանց համաձայն Բե-րայի գալմագամը, Հարպիէի մուխթարները և քաղաքապետութեան գերեզ-մաններու ճիւղի տնօրէնը, մասնագէտներու հետ Բաւ կաթիլի գերեզմանա-տունը գացած, և անոր տիրանալու համար անհրաժեշտ ձեւակերպութիւն-ները լրացուած են: Արդարեւ, քարտէսը պատրաստուելէ յետոյ 2,400,000 ոսկի ալ քին գնահատած են: Պատրաստուած քաղաքապետութիւնները (պէյրուսա-մէ) ստորագրել տուած են բոլոր ներկաներուն:

Այս առթիւ գացողները հաստատած են որ Ս. Լուսաւորիլ եկեղեցին 25 տարի առաջ շինուած է, և հետեւեալքար անդի հողը ալ կը պատկանի Քաղաքապետութեան: Բայց չուզելով ուսնադուրիւն ընել կրօնական հաս-տատութեան մը մէջ, Քաղաքապետութիւնը որոշած է այդեկեղեցիին ձեռք չ'ապցնել:

Նոյն տեղեկութեանց համաձայն, պատրաստուած յայտարարութիւնն-ը ղրկուած են Թափուրի տնօրէնութեան, և այսօր կամ շաբաթ օր, «Թա-փուր» պիտի առնուի քաղաքապետութեան անունաւ:

Աւելորդ է ըսել թէ կանխաւառ է վերջին լուրը, այսինքն թէ «Թափուր» մէկ օրէն պիտի տրուի: Որովհետեւ, ինչպէս գրած էինք, գատարանը կրկին երկարաձգած է «Թէտպիլը ինթիլթի»ին, ինչ որ կը նշանակէ թէ քաղա-քապետութիւնը չ'ի կրնար տիրանալ գերեզմանատան: Այնպէս որ եղածը պէտք է ընդունել իբր նախնական պատրաստութիւն:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԴԱՏՈՐ ԱԿՍԱԼ

Երէկ, Պոլսոյ Քաղաքային Բ. առեանին աւելեւ վերսկսաւ Սանասար եան խանին դատը: Կառավարութեան փաստաբանը ըսաւ թէ գատարանը պէտք է էնկիւրի հարցնէ թէ Հայոց Պատրիարքութիւնը գոյութիւն ունի, և թէ Պատրիարքը Նարոյեան էֆենդիին է, ինչպէս որոշած էր վճարակը: Նճաթի պէն և Պ. Մ. Նարեան պատասխանեցին թէ հարկ չ'կայ ա-տոր, քան որ վճարակը իր ամենավերջին որոշումով որոշակի հաստատած է թէ Պատրիարքութիւնը գոյութիւն ունի և թէ Նարոյեան արքեպ. Պատ-րիարքն է:

Դատարանը որոշեց տեսնել վճարակին վերջին վճարադրը, որուն պատ-ճէնը կը գտնուի Պատրիարքարանի փոխանորդներուն մօտ, և գատավարու-թիւնը յետագայ Մարտ 18:

ԼՆՈՂՈՒՄԱՆՈՒՐ ԻՐԱԳՐՈՂՆԵՐԸ

ԸՆՏՐՈՒՄ Կ'ՈՒԳԵՆ

«Սօն Փօսթ» կը գրէ թէ էնկիւրիի մէջ շրջող զորոյի մը համաձայն երեքփոխանական թեմանու ըլլալու համար ինչպէս չ'ի մօտ են կարգ մը նախկին ընդդիմադիր քաղաքացիներ, որոնք Շէյխ Սալիհի ըմբաստանութեան իջոյն Տիրապէճը: Անկախութեան հոգմէ քառուած էին:

ԵՐԳԻՍԿԱՆ

ԿԻՒԼԼԻ ՊԱՃԸ ԵՒ

ԹՈՒՐՅԱՆՏԱ ՏՈՒՏՈՒ

— Այն, Թուրքիայի Տուրքա-այսօրուան տէրտու հէջ մի հարցնէր:

— Խէր ըլլայ:

— Բանի չ'ի կը տեսնեմ նէ սա պիւրեթ տօքթօրին պօմպօշ Նասիլը, կարծես քի պիւրիւն իւղիւր կը հա-լին կոր: Ինչ թօնաֆ պանէ, խօս խօճաման Պէյրուսի մէջ հէջ մի հի-ւանդ չ'ը կայ: Բէշէկէ դրացին չ'ըլլայի տէ չ'ը տեսնայի:

— Իմ ալ սա բանը թէ՛ անկա-կերթայ քի ինչ ու անխնայ կը մըտ-մտաւ կոր տօքթօրին համար:

— Ինտո՞ր չ'ը մտմտամ, մէջ մը տիւշիւնմիշ ըրէ, թա՛քի սա տէրէ-ճէին: հասեր է նէ անապա ինչ խը-տար փարա սարֆ ըրեր է:

Մեր քեսէյն չեղաւ եւ ձէլ-պէթտէ Աստուած անոր ալ իր խը-մէթը կուտայ:

Բեզի բան մը ըսեմ: Չէլպէթ ալ լսած ըլլալու եւ: Այսօր Պիթ Բազա-րին մէջ կայ կայ եղբերէկեր կ'ուզեն նէ երթան:

— Ինչի մէջատ:

— Բա, ինտո՞ր չ'ի մտցար, ամէն մարդու բերանն է: Կերկի թէ այս օրերս զազէթաները հէջ ալքէ չ'են անցուցած:

Ուր է սա մեր Մատամը կայեա իշթէ անկա զազէթէն մը աննիւթ-ուին եղեր տէ խեղճ մարդը եր պարտքը վախթին թէսփիչէ չէ ըրեր տէ, Մատամն ալ անոր պիւրիւն ա-լաթ էտէվաթը հիւրիկ տակ առնել տուէր է: Իշտէ սա ալքէթները մէ-զատ պիտի ըլլան եղեր:

— Բանի չ'ի մէջէն մեր Մա-տամին վրայ է, երթանք, պէթթմ մեզի ետարա պան մը կ'ըլլայ տէ ու-նուգճատան կ'առնենք:

Հառաջ մէջատ... ալա ունա... ալա տուէ... միջէ ու խամսին... միջէ ու խամսին...

— Միթէյն

— Միթէյն... ալա ունա... ալա տուէ... միթէյն... միթէյն, ալա... ալա...

— Աս ինչ խըտար խալապալա է: Մապէս մէկ թարաֆ քաշուինք տէ սէյր ընենք: Իրաւ է քի սէյր ընելու պան է եղեր: Անապա Մա-տամն ալ հո'ս է:

— Մեղայ ըսէ, քա կիւլի Պա-ճըս, հէջ Մատամը իր օճօրին կը ձգէ տէ հոս կուգայ մի, ամամա զազէ-թանը հոս է, իշտէ սա սիւհ չապ-խալը կը տեսնա մի եւ, իշտէ ա-նիւկ է:

— Չալալըն ինտո՞ր ալ սա փ սարը քեսիւմիշ եղեր է:

Օյա ըլլի, փարան առնել գիտէ տէ, տալը ինտո՞ր չ'ի տէր:

— Մէսէյն փարային վրայ չէ, կիւլի Պաճըս: Գիտես քի Մատամին համար 6-7 ոսկին հէջ ալ էնմիլիթ չուէր, ամամա, ո'վ գիտէ անապա ինչ խըտար կիւլի Նարոյեանը ըրեր են քի Մատամն ալ մէջպուր եղեր է այս-պէս ընելու:

Միթէյն ու խամսին... ալա ունա... ալա տուէ... միթէյն ու խամսին... ալա... միթէյն...

ԽԱՅՐՈՅ

Հայագի երեւոյթիս ճիւղ Ապսալա Իսնակ մէկ տարուայ 10 բաժնեկի «LE LIBAN» կը նկարէ: Մեր ճանաչակալութիւնները



## ՀԱՅԿ. ԿԵԱՆՔ

### ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ ԵՒ ԼԵՆԻՆԱԿԱՆ  
ՆՈՐ ՅԱՏԱԿԱԳԻԾՈՎ  
ՊԵՏԻ ՇՆՆՈՒՄ

«Այ. Հայաստան» կը գրէ թէ Երեւան և Լենինական հիմնապէս պիտի բարեփոխուին և պիտի օժտուին արդիական քաղաքակրթութեան համապատասխանող պահանջներով: Երեւանի վերաշինութեան գործը ըստանձնած է հայ պետական շինարարութիւնը իսկ Լենինականինը՝ Լենինականի Բաղ. Խորհուրդը, որ յանձնած է զայն Պ. Հաղարեանին, քաղաքին նոր յատակագիծը պատրաստելու համար:

### ԿԵՂՄԱՇԿԸ ԿԱՆՇԵՏԱՆԱՅ

Երեւանի մէջ կեղծմաշկը 'անհնաւանդ հետզհետէ' Դեկտեմբերին 34 դէպք, Յունուարին՝ 44, իսկ Մինչև 12 փետր. 12 դէպքեր պատահած են: Կեղծմաշկի դէմ 14000 տղայ պատուաւորուած են:

### ԵՐՈՊԱ

Պ. ՊՈՒՆԵԱԲԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ  
Յրանքօ-Ամերիկ. Յանձնաժողով մը որ կը բաղկանայ Կ. Հանսօմ-ի, Հանրի Պորտոյի և Հանրի Պէրք-սօնի նման յայտնի դէմքերէ, ֆրանսական վերջին լաւագոյն հրատարակութեանց ընտրութիւնը կատարելու առթիւ գնահատած է նաեւ Պ. Պունեաբեանի գործը, որ կը կրէ «Տնտեսական տաղանդներ» առնուելու և որ կը խօսի տնտեսական, առեւտրական և երեւմտական կեանքի զանազան երեւոյթներուն վրայ, կը գրէ «Տէպա»:

ԲԱՐԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԸ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ  
ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ

Անձանօթ անձնաւորութիւն մը Բարիդի «Ագարի» ֆրէթիէն ան Լըվա-նի «Լըվան» թերթին մէջ կը գրէ. «Նոյն խոսքերով կը լսուինք Պունեաբեանի կը զրկեմ 3000 Ֆրանքի գումար մը, որպէսզի Սուրիոյ մէջ տնակ մը շինէ և նուիրէք ընտանիքով բնակաւորուած այլի հայու-կի մը, Յրանապի անանանուն քը-րիստոնեայ բարեկամի մը կողմէ: «Իմ երազս էր ինծի համար տը-նակ մը շինել երբ որ հանգստեան կըլուէի-եթէ Աստուած ինծի կեանք տայ մինչև այդ օրը:» Երազս պիտի իրականանայ ձեր շնորհիւ և ու-րիշներ պիտի բնակին այդ տունը:» Արդի մըն ալ նոյն թերթին մէջ կը գրէ:

«Ձեր թերթին վերջին թիւին մէջ կարդացի թէ հայեր կան որ կ'ուզեն ուսում առնել, բայց մի-ջոց չունին: Երբեք անկէ 100 Ֆրանք կը զրկեմ այդ նպատակով: Ես ինքս բախտ չ'ունեցայ ուսումս շարունակելու հակառակ ջնքմ փա-փաքիս, և գիտեմ թէ մարդ ինչ կ'զգայ երբոր կ'ուզէ ու միջոց չունի: Ասոր համար է որ կ'ուզեմ օգ-նել որպէսզի ուրիշներ կարենան ի-րագործել իրենց փափաքը»:

### ԱՍԵՐԻԿԱ

ՄԵԾԱՀԱՐՈՒՍԻ ՄԸ ՄԱՀԸ  
Ամերիկայի մէջ մեռած է մեծահարուստ Յակոբ Պոլիկեան որ ծանօթ էր իբրև արեւելեան գորգե-րու ներածող: Իր առաջին գորգը թախած է բանաստեղծ Հենրի Լոնկ-ֆելտի:

Ամերիկահայ թերթերը կ'աւել-ջնեն թէ Պոլիկեան մեծապէս օգ-նած է Հայերուն:

### ԼԻԲԱՆԱՆ ՂԸ ԾԱԽՈՒԻ

Անտեսան Դրաստուն Պէրուս  
Ե. Նաւարեան « Խալի  
Տօնիկեան Դրաստուն « (Բէմ)  
Քարսեղ Դրաստուն Դրաստուն

## ՏԵՂԱԿԱՆ

### ԵԼԷՔՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Անց'ալ շարաթ' ելէք տրակտու-թեան և հանրականքի գինեւր զեղջ ման խնդրոյն շուրջ խորհրդակցելու համար ժողով մը գումարուեցաւ Նանալի քրիստոնեային մէջ:

Կօմիտէին ղրկուած բողոքազը-րեքէն շատ մը օրինակներ ղրկուած էին նաեւ Երեւանի, Ժողովին, Ներքին Նախարարութեան, Բ. Գօմիտէրու-թեան, Մամուլի Մէնտիքային և Բաղաքապետութեան:

Որոշուեցաւ, Պ. Պ. Հանրի Յա-րաթէ, Տօնի. Յախարէ և Ապտալ-լա Նաֆիէ բաղկացած պատուիրա-կութիւն մը ղրկել Ներքին Նախա-րարին, անոր ներկայացնելու հա-մար ժողովուրդին պահանջները, այսինքն ելէք տրակտանութեան հա-մար 12 Ս. Դահ. քիւլօվաթայի գը-լուիս, իսկ հանրականքի համար 3, 3,50. 2, 2,50 և 1 Դահ. ըստ հե-ռաւորութեան:

Պատուիրակութիւնը առջի օր ներկայացաւ Ներքին Նախարարին:

Կը լսենք որ Նախարարաց խոր-հուրդը իր յանձնարարութեան մէջ պիտի զբաղի այս խնդրով:

### ՀԱՊԻՊ ԹԱՀԱ

#### ԱԶԱՍԱՄ..... ԿԱՌՈՒԵԼԷ

Վերջին պահուն կ'մանանք որ Հանր. Նախագահը քննելով Հապիպ Թահայի գատալարութեան թղթա-ծրարը, ջնջած է տրուած մահուան վճիռը, ցկեանս բանտարկութեան փոխելով դաշին:

Նախագահական սոյն որոշումը հաղորդուեցաւ բանտային վարչու-թեան, զայն ծանուցանելու համար Հապիպ Թահային:

#### ՆԱԽԿԻՆ ՎԱՐՁԱՊԵՏ

#### Մ. ԵՄԻԼ ԷՏՏԷՆ

#### ՍԱԿԱՍԷ ԱԶԱՍՈՒԱՄ

Իմը իտալ. գատական գործի մը համար Դամասկոս երթալու մի-ջոցին, Տահր-Պալապի մօտերը, իր նստած ինքնաշարժը ընդհանրու-մ'ունեցած է ուրիշ ինքնաշարժի մը հետ:

Շնորհիւ վարչի ճարպիկութեան բարեբախդարը Մ. Էտալեն ազատ-ուած է առանց վնասուելու:

#### ՄԵՐ ԽՆԴԱԿՆԵՐԻՆԵՐԸ:

#### «ՀՅԿ»-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Այսօր, երեկոյեան ժամը 7,50ին Զօր. Անգրանիկեան Մանկագարտէ-ջի օրակին մէջ պիտի ներկայացուի Բ. Պարոնեանի «Շողոքօրթ»ը:

## ՏԱՂ ԱՌ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Համայնագիւղ Հայաստան  
Միակ յոյսն ու ապաստան,  
Դուռն էս, լուկ դո՛ւն յաւիտեան,  
Եկեղեցի՛ Հայկական...

Հնադարեան յոյգերուն՝  
Միակ անմեղ խնկարկուն՝  
Դուռն յաւէտ մեղ վերջիշես  
Հին Հայ դըրախտն ու պարտէզ...

Ու մեծասքանչ մեր Լեզուն  
Դուռն կը պահես եռանդուն,  
Ու միշտ կ'երգես դարէ դար  
Սուրբ Նարեկի վեհ բարբառ...

Մեր ինքնուրոյն գոյութեան,  
Դո՛ւ ես միակ մեծ վրկան,  
Որ տարածես բոլորին  
Քու հայրական հովանին:

Ապրէ՛, խնկէ՛ յաւիտեան,  
Եկեղեցի՛ Հայկական:

Նիկոսիա ՆՈՒՊԱՐ ՄԱԴՍՈՒՏԵԱՆ  
(Կի պրոս)

=====

Կը յուսանք որ հայ թատերասեր հասարակութիւնը իր ներկայու-թեամբ պիտի քաջալերէ «Հօգը և այսպէսով սատարած պիտի ըլլայ Հայաստանի շինարարութեան նու-րական գործին:

#### ԼԷՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

#### ՊԵՏՐՈՒԹԻ ՄԷՋ

Այլիւրի սկիզբները 100ի մօտ  
Լէհ ուսանողներու Պէրուսի աշո-ւթիւնը հեռագրով տեղեկացուցու-ած է Բ. Բօմիտէրութեան:

#### ԹՈՒՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Հալէպի վաճառականները որո-շած են թուղթի գործարան մը հաս-տատել:

Ջեռնարը ուսումնասիրելու եւ յոյժեցնելու համար մասնաւոր յանձնախումբ մը ընտրած են սրու-մէջ կը գտնուի Գերմանիոյ մէջ ու-սում առած մասնագէտ մը:

#### ՊԱՇՏՈՆԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հալէպի գատական 18 պաշտօն-եաներու փոփոխութիւններ եղած են, որոնց մէջ Խալիպի ընդհ. դա-տախազ Տիար Աստուածատուր Ֆէթ-թէլեանն աստիճանի բարձրացումով Տէր Զօրի պատժական Նախադատ տետեանի Նախագահ ընտրուեցաւ:

#### ԿԱՐԴԱՑԷՔ

#### ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ

#### «ԼԻԲԱՆԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻՐԸ

= 156 =

Ծանթըքօք թղտառացի գրքին էջերը, որոնք գրուած էին նոյն թուականի Ֆրանսերէնովը: Ան կանգ առաւ հետեւեալ գլուխին վրայ, զոր կը թարգմանենք ար-գիական Ֆրանսերէնով:

«Յեղափոխութեան վաղորդային, մինչև Ն. Վ. Հենրի Գ. ներկայ կը գտնուէր իր Լուվրի պալատին մէջ, սորաբաւ շքեղ պարահանդէսի մը, Գաթէրին թագուհին իր քով կանչեց զին:

Իմ աղգեցիկ ու յարգելի խնամակալուհիս իր սե-նակին մէջ կը գտնուէր: Ան նստած էր թեկնա ա-ռի մը վրայ, սեղանի մը մօտը, որուն վրայ կար նրբօրէն քանդակուած անկիւնաերկաթներով կաշեայ արկղ մը, և որուն կախարիւր իր կեդրոնին վրայ կը կրէր վալուաներու զինանշանը:

Խոնարհիւ է յետոյ առջեւը, կ'սպասէի որ բարե-հաճէր ինձ ուղղել խօսքը...: Երկար ժամանակ լը-ուութիւն պահեց... ի վերջոյ, ծանր ձայնով մը ըսաւ:

— Մինչ անոնք վերը կը պարեն, վալուանե-րու իշխանութեանը գէմ ապստամբած ժողովուրդը մեր խնդիրն ինքնամիտ կ'իլի Դուքսը կ'ողջունէ:

«Պէտք է որ ինքնախարտութեամբ տարուինք: Այդ անիծեալ Պէլլէկօրէն, որ կուզէ յափշտակել զաւանդներս իրենց նախնիքներուն թաղը, կը կա-շառէ շատերը և մոլեռանդութեան կը մղէ ուրիշ-ները:

«Նախ քան անոնց բողոքովին կացութեան տէր Գ. Ռեալը, եթէ չենք ուզեր որ իր ձեռքերը իյնանք, թագաւորն ու ես աճնակաբե ժամանակամիջոցի մէջ պէտք է որ գաղափարի կերպով հեռանանք Թագիկէն: Եւ իր մօտ գնեցուած արկղը ցոյց տա-լով աւելցուց:

## Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

### Մ. Նահանգներու Օդային Պիւտնէն

Վաւերիքով: 17-3-31:— Մ. Նահանգներու օդային օդովոր պիտի բաղկանայ 388 սաւառակներէ:  
Ասոնց համար 18 միլիոն օտար յաւակցուած է:

### Նախկին Վարչապետ Միլլէր հիւանդ

17-3-31:— Պէրլինգը կը ծանուցանեն թէ նախկին Վարչապետ Միլլէր ծանրապէս հիւանդ է:

### Ալֆօն Թագաւորը Լօնտօն գնաց

Մասրիս:— Սպանիոյ թագաւոր Լօնօն մեկնեցաւ այցելելու համար իսթամուլի Պէաթրիսին:  
Կը կարծուի թէ թագաւորը քանի մօր միայն պիտի մնայ: Վերադարձին Բարիդի մէջ պիտի տեսակցի Պ. Սանթիակօ Ալ-պայի հետ, եւ զայն պիտի հիւսիք Սպանիայ:

### Զինաստանի Խռովութիւնները

#### կը շարունակուին

Բէթին:— Համանի մէջ 10,000 զինուորներ ապստամբեցան: Կառ. հաւասարիմ զինուորական կարեւոր ոյժեր շարունակ կը դրկուին ամենց դէմ, ըմբոստութիւնը զսպելու համար:

### Կացութիւնը Հնդկաստանի մէջ

Տէնիլ:— Փոխ-արքան հրամաւագիր մը հրատարակեց ժամ ա-ռաջ վերջացնելու համար դատաւարութիւնը 350 անձերու որոնք վերջին ապստամբական շարժումին մասնակցած էին:

### Կացութիւնը Ճաբօնի մէջ

Թօփա:— 352 աշակղմեաններ՝ հակառակ Ոսթիկանական արգելիքին, մտնալով Վարչապետ Նամակիթի մօտ պ'ստանցեցին որ Պուրժուա դահլիճը լուծուի,

### Սովիթներու երկրին մէջ

Մոսկուա:— Օտարներու օգնութեամբ ներկայ Բէթիլը տալա-լիւն ամբաստանութեամբ 7 Մեքէվիկներ տալական տարուան դատաւարութեան, ուրիշ 7 հոգիներ ալ՝ 4-5 տարուան:

### Տըմրինկի դէմ

Եռկոսլաւ կառավարութիւնը «Տըմրինկ» ի դէմ պաշտա-վելու համար ռուսական արտագործիներու մօտեւ արգելեց իր երկրին մէջ:

= 153 =

Այդ չէ՛ տմէնը, վերոգրուած տնօրէնը... Ահա արկիւր մը անկիւնաերկաթը որ, սիրելի Շանթըքօք, ինչպէս չէք կարող չը ճանչնալ զայն, բացարձակա-պէս նմանն է անոր զոր դուք գտաք Լուվրի մէջ:

Եւ երկաթը գաղտնի ոստիկանին տուաւ, որ ու-շագործութեամբ վննելով զայն, մրմաջ:

— Զիշտ է:

— Բայց ամէնքը այդ չէ, յոյսորտաց Պ. Ֆէրվալ: Եւ առնելով ձեռագիրը, զոր Ուէնարտիէ գտած էր լրագրողին գրադարանին խորէն, զայն հուշա-կաւոր գաղտնի ոստիկանին ներկայացուց աւելցը-նելով:

— Ահաւասիկ գիւթական մատնան մը, որուն ընթերցումը պայծառ լոյս կը ոգիւն այդ վրդովիչ պատմութեան վրայ:

Հանդարտօրէն Շանթըքօք յարեց:

— Պրն. Գանթարէլին, որ խիստ վարպետ է հին ձեռագրերի կարգաւոր, անկասկած չափազանց երջանիկ պիտի ըլլայ տեղեկանալով անոր:

Ժաք փութաց կրկնելու:

— Անկասկած, շատ կը փափաքեմ մօտէն տես-նելու այդ վաւերաթուղթը:

Տնօրէնը ոտքի ելաւ և հրախօսեց Պ. Գանթա-րէլին գրաւելու իր տեղը... և մինչդեռ այս վերջի-նը կ'ուզէր թղթատել Գրեթական ժառանգը, Մէ-նարտիէ որ մինչ այդ չէր գաղտնի հեղեղով բո-ցափառ զոյգ մը աչքեր ուղղելէ Շանթըքօք վրայ, մօտեցաւ իր պետին և ըսաւ:

— Պ. Տնօրէն, կը խնդրեմ որ արտօնութիւն տաք ինծի հետեւեալու, վասն զի հարկաւոր է որ անյապաղ Պ. Պէրլինգին հետապնդմանը ձեռնարկեմ:

Զիշտ է բարեկամս, շտապեցէք:

